ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 17 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի

Զ.Ղուկասյանի

Քննության առնելով Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1.Քաղաքացի Ռուբեն Թորոսյանը 05.02.2009թ. դիմել է սահմանադրական դատարան վիճարկելով ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ վերջին պարբերության, 63.2-րդ հոդվածի 3-րդ կետի, ՎԴՕ 143 հոդվածի. 146 հոդվածի 6-րդ կետի և ՔԴՕ 236 հոդվածներով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2.Դիմողը միջնորդում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի (ժդ) կետի հիմքով իրեն ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Դիմողը խնդրել է «քննել՝ ա) ՀՀ ընտրական օրենսգրքի 40.1-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ /վերջին/ պարբերությամբ և 63.2 հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթների սահմանադրականության հարցը, այն է՝ այդ դրույթների ենթադրյալ հակասությունը ՀՀ Սահմանադրության 18-րդ, 27.1-րդ և 30-րդ հոդվածներով սահմանված համապատասխանաբար «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք», « Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական ..... մարմիններին .....դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ... պատշաճ պատասխան ստանալու իրավունք» և «...ընտրելու իրավունք» դրույթներին:

բ) ՎԴՕ «Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը» 143-րդ հոդվածով և «Վարչական դատարան դիմելու և հայցադիմումը քննելու ժամկետները» 146-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դրույթների սահմանադրականության հարցը, այն է՝ այդ դրույթների ենթադրյալ հակասությունը ՀՀ Սահմանադրության 19-րդ - 30-րդ հոդվածներով սահմանված համապատասխանաբար «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու ... դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք» և «ընտրելու իրավունք» դրույթներին...

գ) ՔԴՕ «Վճռաբեկ դատարանում գործի քննության ժամկետը» 236-րդ հոդվածով սահմանված դրույթի սահմանադրականության հարցը, այն է՝ այդ դրույթի ենթադրյալ հակասությունը ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով սահմանված «յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու ... դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք» դրույթին»:

ՀՀ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով անհատական դիմումին ներկայացվող պահանջներից մեկն էլ օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելն է:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասին 3-րդ պարբերության համաձայն .«Դիմողի միջնորդության հիման վրա նրան պետական տուրքի վճարումից ազատելու հարցը սահմանադրական դատարանը լուծում է անհատական դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները սահմանված են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով, որի ժդ) կետի համաձայն պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն ունեն. «դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով»:

Սահմանադրական դատարան հասցեագրված իր դիմումով քաղաքացի Ռ. Թորոսյանը բարձրացրել է օրենքի դրույթի սահմանադրականության հարց, որի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով պետական տուրքի վճարումից ազատում նախատեսված չէ:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27 հոդվածով և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25 հոդվածի 2-րդ մասով Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Չբավարարել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի միջնորդությունը և դիմումի ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝